ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

7 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2021 թ.

№ 11 (1075)

Թերթի առաջին համարը լույս է տեսել1965 թ. մարտի 11-ին
Երկշաբաթաթերթ ● հրատարակման 56-րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

Հույսով՝ ապագայի հանդեպ, գիտելիքներ ամբարելու մեծ ցանկությամբ

Մանկավարժական համալսարանի առաջին կուրսերի ուսանողների համար ավանդական է դարձել «Երդման արարողությունը»: Ամեն տարի այն կազմակերպվում էր Քանաքեռում՝ մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանի անվան տուն-թանգարանում: Այս տարի միջոցառումը կազմակերպվեց խորհրդանշական ձևաչափով, Ալեք Մանուկյան փողոցի վրա գտնվող համալսարանական մասնաշենքի բակում՝ Արցախի 44-օրյա պատերազմում զոհված համալսարանականների հիշատակին կառուցված հուշակոթողի մոտ:

ՀՊՄՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար, աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Խոեցյանը ծաղիկներ դրեց հուշակոթողին: Մեկ րոպե լռությամբ ներկաները հարգեցին զոհված համալսարանականների հիշատակը:

Ուսանողական խորհրդի նախագահ Պարույր Գալստյանը շնորհավորեց առաջին կուրսի ուսանողներին և մաղթեց հաջողություններ ուսումնառության ընթացքում:

Ուսանողներին շնորհավորեցին և բարեմաղթանքի խոսքեր հղեցին ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի դեկան, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, գերաշնորհ Տեր Անուշավան եպիսկոպոս Ժամկոչյանը, ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Աշոտ Խոեցյանը, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սիդա Թոփուզյանը, դոցենտ Արա Գևորգյանը: Նրանք իրենց գոհունակությունը հայտնեցին առաջին կուրսեցիներին Մանկավարժական համալսարանն ընտրելու համար և հորդորեցին լավ սովորել:

Գերաշնորհ Տեր Անուշավան եպիսկոպոս Ժամկոչյանը Տերունական աղոթքով սկսեց իր օրհնության խոսքը, ապա նշեց, որ Մանկավարժական համալսարանը մեր երկրի լավագույն բուհերից մեկն է և մեծ պատիվ է ընդունվել և լինել մեծ Լուսավորչի անունը կրող բուհի ուսանող:

Դիմելով ուսանողներին՝ նա հիշեցրեց ամիսներ առաջ նույն վայրում օծված հուշաքարի մասին, որը ոգեկոչում է բուհի՝ զոհասեղանին իրենց կյանքը դրած զավակների հիշատակը. «Վստահ եմ՝ հուշաքարի մոտ երդվելով, հիշատակի այս խաչքարի կողքով անցնելով, կհիշեք և կներշնչվեք հայրենասեր որդիներով, որոնք իրենց երկրային կյանքն ավարտեցին՝ միանալով նախնիների լուսե երամին»:

Վեհափառ Հայրապետն առաջին կուրսի ուսանողներին մաղթեց, որ «կյանքի յուրաքանչյուր պահը, օրն ու ժամը նվիրեն գիտության քանքարները հավաքելու կարևոր գործին և այն փոխանցեն իրենց աշակերտ-զավակներին, ապա հավելեց, որ ներկա դժվարին ժամանակներում հայ դպրոցն ու մանկավարժը շատ բան ունեն անելու մեր երկրի ապագայի համար»:

Առիթից օգտվելով՝ նա շնորհավորեց նաև պրոֆեսոր Աշոտ Խոեցյանին՝ բուհի ռեկտորի ժամանակավոր պաշտոնում նշանակվելու առիթով և իր վստահությունն արտահայտեց, որ նրա ղեկավարությամբ Մանկավարժական համալսարանը կպահվի բարձունքում և նոր հաջողություններ կգրանցի:

Մանկավարժական համալսարանի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար, աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Խոեցյանը շնորհավորեց ներկաներին և վստահեցրեց, որ պրոֆեսորադասախոսական կազմը մշտապես ուսանողի կողքին է:

Նա խորհրդանշական համարեց երդման արարողության վայրը, հորդորեց՝ ուսումնառության ընթացքում մշտապես հիշել նահատակներին և ամենայն պատասխանատվությամբ վերաբերվել կրթության սուրբ գործին:

«Հուսով եմ՝ մասնագիտության ընտրությունը կատարել եք մտածված և սրտի թելադրանքով: Ոտք դնելով բուհ՝ որոշել եք դառնալ հայրենասեր մարդ ու լավ մասնագետ՝ ամբողջությամբ նվիրվելով երկրի կայացման և բարգավաճման գործին,- ասաց Աշոտ Խոեցյանը:- Միայն մեծ նվիրվածության դեպքում է հնարավոր մանկավարժի գործը ծառայեցնել երկրին և, որ 100-ամյա պատմություն ունեցող Մանկավարժական համալսարանն ամենահեղինակավոր բուհերից մեկն է, որն ունի ավանդույթներ, պատմություն և հրաշալի մասնագետներ, ինչպես նաև անցյալ սերունդներ, որոնք իրենց հետքն են թողել այդ պատմության մեջ»:

ՀՀ վաստակավոր արտիստ, երաժշտության ամբիոնի վարիչ, դոցենտ Արա Գևորգյանը շնորհավորեց ուսանողներին, ընդգծեց օրվա խորհուրդն ու նշանակությունը և հորդորեց լուրջ վերաբերվել ուսումնառությանը և ուսանողական տարիներին:

«Մանկավարժական համալսարանը տարբերվում է այլ բուհերից. մեր ուսանողը կրկնակի առաքելություն ունի՝ մեր երկրի, մեր ժողովրդի առջև: Լավ մասնագետ դառնալուց զատ, պետք է կարողանաք ձեր գիտելիքները, կարողություններն ու հմտությունները փոխանցել մեր երեխաներին»,-ասաց մանկավարժության ամբիոնի վարիչ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սիդա Թոփուզյանը:

Նա հորդորեց՝ «Ուր էլ լինեն՝ չմոռանան, որ իրենք Մանկավարժական համալսարանի ուսանողն են, այս բուհի շրջանավարտը, որը դաստիարակում է մեր երկրի ապագան և իր կարևոր պարտքն ունի հայրենիքի, ժողովրդի առջև»:

Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի առաջին կուրսի ուսանողուհի Արմինե Հաջյանն ընթերցեց ուսանողի երդման տեքստը:

Համալսարանի շեմին ոտք դրեց ապագա մանկավարժների ևս մեկ սերունդ՝ հույսով՝ ապագայի հանդեպ, գիտելիքներ ամբարելու մեծ ցանկությամբ ու սիրով, ապագան ավելի լավը դարձնելու հաստատակամությամբ, որպեսզի էլ ավելի բարձր պահի հայ մանկավարժի անունն ու կոչումը:

> Յուրաքանչյուր գրագետ մարդ պարտական է ուսուցչին: Հզոր է այն ազգը, որն ունի լավագույն ուսուցչություն: Ծնողները երեխային տալիս են մարմին, իսկ ուսուցիչը՝ հոգի, բարի կամք ու բարձրագույն իդեալներ:
>
> Ավետիք ԻՍԱՀԱԿՅԱՆ

Նախարարն այցելեց ՀՊՄՀ ավագ դպրոց-վարժարան

Ուսուցչի տոնի առթիվ Մանկավարժական համալսարանի հենակետային վարժարան-ավագ դպրոց էին այցելել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Վահրամ Դումանյանը, փոխնախարար Ժաննա Անդրեասյանը, այլ պաշտոնատար անձինք: Նրանք շրջայց կատարեցին հիմնավերանորոգված դպրոցում, ծանոթացան ժամանակակից կահավորմամբ հագեցած դասասենյակներին և լաբորատորիաներին:

Մանկավարժական համալսարանի ղեկավարության և դպրոցի ուսուցիչների հետ հանդիպման ընթացքում Վահրամ Դումանյանը շնորհավորեց ուսուցիչներին մասնագիտական տոնի առթիվ, նաև արժևորեց նրանց դերը հզոր ու կայուն պետություն ունենալու գործում:

«Թույլ տվեք շնորհավորել մասնագիտական տոնի առթիվ, կարծես մենք նորովի ենք արժևորում ուսուցչի դերը հասարակության մեջ, նրա կատարած աշխատանքի կարևորությունը բոլոր ասպարեզներում: Մեր ամենամեծ անվտանգությունը ճիշտ կրթությունն է, սիրելի ուսուցիչներ, դուք եք մեր հրամանատարները, մեր ուղեղները ձևավորողները, որոնք վաղը պիտի ճիշտ որոշումներ կայացնեն ու ճիշտ մտածեն: Այստեղ է թաքնված ամենամեծ խնդիրը, մնացած հարցերն այս ամենի հետևանք են: Սրտանց շնորհավորում եմ բոլորիս, նաև խոնարհվում եմ բոլոր այն ուսուցիչների առջև, ովքեր մեծ ներդրում ունեն կրթության ասպարեզում և այսօր չեն աշխատում, բայց ունեն ուսուցչի կարգավիճակը»:

Նախարարը վրդովմունքով խոսեց այն լրագրողների մասին, ովքեր աղավաղել էին իր խոսքը, միաժամանակ ափսոսանքով նշեց, որ պետությունը չունի ուսուցչին հավուր պատշաճի գնահատելու հնարավորություն. «Բայց անգամ այս պայմաններում փորձում ենք որոշակի ուղիներ գտնել, այդ պատճառով մենք ստեղծել ենք այնպիսի համակարգ, որը հնարավորություն կտա ոչ թե համատարած, այլ անհատականացված մոտեցում, որը կառուցվում է պրոֆեսիոնալիզմի հենքի վրա»:

Նախարարը խոսեց կրթության տարբեր շերտերի որակական մակարդակների մասին՝ պայմանավորված պրոֆեսիոնալիզմով, փորձով և գիտելիքով. «Կամավոր ատեստավորումը դրա առաջին փորձն էր, որն ընդհանուր առմամբ մեզ հաջողվեց: Այս համակարգը հետագայում առավել կկատարելագործվի. մենք պլանավորում ենք նաև ներդնել կրեդիտային համակարգ:

➤2

Նախարարն այցելեց ՀՊՄՀ ավագ դպրոց-վարժարան

➢1 Իհարկե, ուսուցիչը շատ ավելիին է արժանի, կարգով: Մենք շարժվում ենք ճիշտ ուղղությամբ»:

«Հանրակրթությունը մեր ամեն ինչն է,- ասաց նախարարը՝ վստահեցնելով, որ նախարարությունում այդ ըմբռնումը կա և արտահայտված է կառավարության ծրագրում:- Ուսուցչի աշխատավարձի վերանայումը, դպրոցական միջավայրի ձևավորումը, մի խոսքով, կառավարության համար մեկ խնդիրն է այսօր կրթությունը»,- վստահեցրեց Վ. Դումանյանը՝ ևս մեկ անգամ փաստելով, որ ուսուցիչների հոգսերը իրենց բոլորինն է, որ «մեր երկիրը պետք է հզորանա, և դրա ամենահզոր զենքը կրթությունն է»:

Նախարարը բոլորին մաղթեց առողջություն, խաղաղություն և կրթությամբ հզորանալու կամք:

Շնորհավորելով բոլորին դպրոցի հիմնավերանորոգման առթիվ՝ նա հավաստեց, որ Մանկավարժականը մեր երկրի խոշորագույն բուհերից է, որ նոր ղեկավարի գլխավորությամբ ամեն ինչ կարվի, որպեսզի բուհը շարունակի իր երթը և իրեն հզոր զգա:

Փոխնախարար Ժաննա Անդրեասյանը նույնպես շնորհավորեց Ուսուցչի օրվա առթիվ՝ ասելով. «Շատ կարևոր օր է այսօր, և շատ խորհրդանշական է, որ մենք այս շենքում ենք գտնվում: Սա մի շենք է, որտեղ տարիներ շարունակ մանկավարժներ են կրթվել և մեծ պատիվ է այս շենքում դասավանդելը, վստահ եմ, որ բոլորդ մեծ պատասխանատվությամբ և նվիրվածությամբ եք կատարում այդ աշխատանքը: Նաև դրա համար եմ շնորհակալ և ուզում եմ հույս հայտնել, որ նոր պայմանները ավելի հետաքրքիր, դյուրին, արդյունավետ և հաճելի կդարձնեն ձեր աշխատանքը»:

Ժ. Անդրեասյանը խոսեց վերամշակված առարկայական չափորոշիչների, կատարված փոփոխությունների և լրամշակումների մասին. «Չափորոշիչները էական փոփոխություններ են կրել. հայ գրականությունը, հայոց լեզուն և հայոց պատմությունը լրամշակվել են մի քանի անգամ և այս պահին փոփոխված տարբերակը եթե համադրեք, կտեսնեք, որ կան փոփոխություններ, և դրանք քիչ չեն, բայց հիմա գտնվում ենք փորձարկման փուլում, դրանք վերջնական չեն և փորձարկումից հետո կրկին կլրամշակվեն: Բեռնաթափման խնդիրը պետք է հաղթահարենք և էականորեն լուծենք»,-ամփոփեց փոխնախարարը:

Ավագ դպրոց-վարժարանի տնօրեն Նաիրա Սաֆարյանը շնորհակալություն հայտնեց այս կարևոր օրը դպրոցում հյուրընկալվելու համար և հույս հայտնեց. «Մենք ինչ ոգևորությամբ և ինչ ուժով աշխատել ենք մինչև օրս, շարունակելու ենք էլ ավելի լավ: Յուրաքանչյուրս մեր գործը պետք է շատ լավ անենք, միայն դրանով կարող ենք ուժեղանալ և պայքարել»:

Նա հպարտությամբ ընդգծեց, որ դպրոցը աշխատանքային լավ ներուժ ունի, որ այսօր կոլեկտիվում աշխատում են 8 գիտությունների թեկնածու, 2 դոկտոր, պրոֆեսոր: Տնօրենը ևս մեկ անգամ շնորհակալություն հայտնեց շենքային հրաշալի պայմանների համար, ուր ամեն օր մտնում են ավելի մեծ ոգևորվածությամբ:

ՆՐԱՆՑ ՕՐԻՆԱԿԸ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԲԱՑ ԴԱՍ Է

Մանկավարժական համալսարանը սեպտեմբերի 5-ին Կուլտուրայի ֆակուլտետի դահլիճում կազմակերպել էր «Հայրենիքի համար» կենսագրական հանրագիտարանի շնորհանդես՝ բուհից Արցախի 44-օրյա պատերազմում զոհվածների հարազատների մասնակցությամբ:

«Մենք այսօր հիշատակի ուխտ ենք կատարում համալսարանի զոհված ուսանողների հիշատակի առաջ, որպեսզի նոր սերնդի երիտասարդները գիտակցումով ու պատասխանատվությամբ գնահատեն նրանց հերոսական օրինակը և մշտապես վառ պահեն նրանց հիշատակը», -միջոցառումն այս խոսքերով բացեց գիրքը կազմած ՀՊՄՀ գիտական գրադարանի տնօրեն Տիգրան Պետրոսյանը:

Խոսելով օրվա խորհրդի՝ Ուսուցչի տոնի մասին, բանախոսն ասաց. «Օրը լցված է ոչ միայն մեր ուսանողների հիշատակի տուրքով, այլև՝ մեր ինքնությամբ՝ Ուսուցչի օրով: Դահլիճում նստած յուրաքանչյուրը հիշում է իր ուսուցչին, իսկ հաջորդ տարի մանկավարժներ պատրաստող բուհը կնշի իր հիմնադրման 100-ամյակը. Մանկավարժական համալսարանը հարյուր հազարավոր ուսուցիչներ է պատրաստել և հպարտ է իր այդ առաքելությամբ»:

«Հայրենիքի համար» գրքում զետեղվել է Արցախի առաջին պատերազմում 17, Ապրիլյան քառօրյայում 1 և Արցախի 44-օրյա պատերազմում 37 զոհվածի կենսագրություն, այդ թվում՝ համալսարանի ավագ դպրոց-վարժարանից զոհված երկու սաների անունները: Գրքում նաև նրանց կենսագրություններն են, ովքեր մարտնչել են հայրենիքի համար և այսօր էլ շարունակում են իրենց գործը հանուն Հայաստանի. ընդամենը 270 անուն»:

Տ. Պետրոսյանցը մատնանշեց մեր պատմության երևելի քաջերի սխրանքը, որը շարունակեցին նոր սերնդի երիտասարդները:

«Այսօր այս դահլիճում մենք մեկտեղել ենք մեր զոհվածների՝ սուրբ նահատակների հարազատներին, որպեսզի ևս մեկ անգամ մեր հարգանքի տուրքը մատուցենք նրանց, որպեսզի կիսենք ձեզ հետ մեր փոքր ազգի

գոյամարտի ծանր բեռը, գոյամարտ, որի ընթացքում հանուն հայրենիքի և ազգի գոյատևման իրենց կյանքը տվեցին մեր երիտասարդները»,-ասաց ՀՊՄՀ ռեկտորի պաշտոնակատար Աշոտ Խոեցյանը:

Ռեկտորն ընդգծեց, որ Մանկավարժական համալսարանի համար ներկա հանդիպումը յուրահատուկ խորհուրդ ունի. «Մեր հերոսները ճակատագրի նման նստած են համալսարանի պատմության հիմքում: Ձեր զավակները իրենց կյանքը զոհեցին հանուն հայրենիքի, նոր սերնդի և մեր ժողովրդի գոյատևման: Մեր ֆիզիկական գոյությամբ շնորհակալ ենք նրանց: Նրանք զոհեցին ամենաթանկը՝ իրենց կյանքը: Նրանց օրինակը, անշուշտ, հարստացնում է շուտով իր 100-ամյակը բոլորող համալսարանի կենսագրությունը:

Այսօր նաև ուսուցչի մեծարման օրն է, ամենակարևոր մասնագիտության, որ մարդու մեջ դաստիարակում է հայրենասիրություն, սեփական երկրի հանդեպ պատասխանատվության զգացում: Մենք այն զուգակցում ենք այս հարգանքի տուրքի արարողության հետ»:

Ռեկտորի պաշտոնակատարը Մովսես Գորգիսյանից սկսած թվարկեց բուհի մի շարք ուսանողների և շրջանավարտների բարձր կոչումներն ու պարգևները՝ միաժամանակ իր գոհունակության խոսքն արտահայտելով գրքի ստեղծման աշխատանքի առթիվ, որովհետև այն «կմնա պատմության մեջ որպես հերոսության և հայրենասիրության օրինակ»:

Բուհի Գիտական խորհրդի որոշմամբ Արցախի վերջին պատերազմում զոհված 37 համալսարանականներին «Մանկավարժական համալսարան» մեդալներ, մեկական գիրք և խորհրդանշական գումար հանձնեցին ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Աշոտ Խոեցյանը, դեկանները, ստորաբաժանումների ղեկավարներ:

Ադամյան Սուրեն Ռուբենի
Բարսեղյան Արտակ Գառնիկի
Ավանեսյան Արեն Արամի
Ավետիսյան Արտյոմ Վաղինակի
Գալստյան Արամ Գալուստի
Հակոբյան Արտաշես Գևորգի
Մելքոնյան Սիփան Սերժիկի
Մաջարյան Ազատ Մելքոնի
Գրիգորյան Արմեն Գրիգորի
Եղիազարյան Լևոն Գագիկի
Գաբրիելյան Սմբատ Գևորգի
Գասպարյան Ռուբեն Ավետիքի
Գասպարյան Սամվել Սահակի
Գասպարյան Նորիկ Արմենի
Գրիգորյան Անդրանիկ Գրիգորի
Խաչատրյան Արա Էդգարի
Խումարյան Մորիս Գագիկի
Կարապետյան Գևորգ Գեղամի
Մազմանյան Սմբատ Հմայակի
Սարգսյան Պողոս Արտյոմի
Գալստյան Շահեն Հարությունի
Մարգարյան Ալեն Լևոնի
Ստեփանյան Արմեն Արթուրի
Սարգսյան Վարուժան Գևորգի
Վարոսյան Նարեկ Մանուկի
Միկոյան Տիգրան Արսենի
Մարգարյան Ռոման Սուրենի
Մելքոնյան Գևորգ Միսակի
Նիկոլյան Հարութ Արմենի
Խաչատրյան Արամ Արայիկի
Հարությունյան Արամ Արշակի
Նալբանդյան Հայկ Գևորգի
Հակոբյան Տարոն Հակոբի
Բեյբության Հովհաննես Սպարտակի
Կարճիկյան Ավետիք Ջավենի
Հովհաննիսյան Էդուարդ Գրիշայի
Կիրակոսյան Աժդահակ Ջավենի

Այս անունները հավերժացան համալսարանի մասնաշենքերից մեկի առջև տեղադրված խաչքար-հուշակոթողին և բուհի տարեգրության մեջ: Անուններ, որոնց օրինակով ապագա մանկավարժների սերունդներ պիտի կրթվեն ու դաստիարակվեն՝ նրանց սխրանքը փոխանցելով իրենց աշակերտներին:

Օրվա խորհուրդը՝ հարգանքի տուրքը զոհված համալսարանականների հիշատակին, հայրենասիրության բաց դաս էր բուհի ուսանողների համար, որոնք այդ հայրենասիրությամբ տարիներ հետո համալրելու են մանկավարժների շարքերը՝ իրենց հետ տանելով օրվա հուզառատ ապրումներն ու նահատակվածների ինքնազոհման օրինակը:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

Հայրենիքը չափելի չէ

Անկախության 30-րդ տարվան ընդառաջ Մանկավարժական համալսարանի Ուսանողական գիտական ընկերությունը կազմակերպել էր «Անկախություն, պետականություն, հայրենիք» խորագրով հանրապետական գիտաժողով:

«Անկախությունը յուրաքանչյուր պետության համար թիվ մեկ նվիրական արժեքն է,- ասաց Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի դեկան, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Էդգար Հովհաննիսյանը:- Բայց պետականությունը մի երևույթ չէ, որը կարող ենք անվերջ սպառել: Ընդհակառակը, մենք մեր ամենօրյա նվիրումով պետք է կերտենք, հզորացնենք մեր երկիրը, փայփայենք մեր 30-ամյա անկախության ձեռքբերումները, մեր ներդրումը բերենք հայրենիքի բարօրությանը»:

Դեկանը շնորհավորեց բոլորին Անկախության ու պետականության 30-ամյակի առթիվ և հորդորեց ուսանող երիտասարդությանը՝ տեր կանգնել և աչքի լույսի պես պահպանել տասնամյակների ձեռքբերումները:

«Անկախությունը, պետականությունն ու հայրենիքը մեծ արժեքներ են: Այսօր, այս գիտաժողովին մասնակցելով, շատերը գիտության ճանապարհին իրենց առաջին քայլերն են անում. Նրանք այսօր կհասկանան՝ գիտության մեջ իրենք ասելիք ունե՞ն»,-ասաց ֆակուլտետի գիտության և միջազգային համագործակցության հարցերով դեկանի տեղակալ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սամվել Պողոսյանը՝ վստահ, որ այս սերունդը կկարողանա ճիշտ ճանապարհով քայլել, կկարողանա իր նպաստը բերել հայրենիքի շենացման գործն:

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, համաշխարհային պատմության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Խաչատուր Ստեփանյանի կարծիքով՝ անկախությունը չի չափվում մերօրյա չափի միավորներով, հայրենիքը չափելի չէ, բայց արժեք է, իսկ գիտությունը ճշմարտության հասնելու ամենաճիշտ ճանապարհն է:

Պատմաբանը շնորհավորեց ուսանողներին գիտաժողովին մասնակցելու առթիվ և հաջողություններ մաղթեց հատկապես գիտական ասպարեզում առաջին քայլերն անող երիտասարդներին:

Գիտաժողովին զեկուցումներ ներկայացրին ՀՊՄՀ-ի, ինչպես նաև ԵՊՀ-ից, Վանաձորի և Գավառի պետական համալսարաններից հրավիրված ուսանողները:

Այնուհետև մանկավարժական համալսարանի Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի Ուսանողական գիտական ընկերության նախագահ Լ. Բազյանը հաջորդաբար ամբիոնի մոտ հրավիրեց զեկուցողներին: Զեկուցումների թեմաները հետաքրքիր էին. դրանք վերաբերում էին սոցիալական մեդիայի օգտագործմանը 44-օրյա պատերազմի ողջ ընթացքում, Հայաստանի երրորդ հանրապետության անկախության հռչակման նախադրյալներին, Հայոց անկախ պետականության կերտմանը 1990-ականներին, Արցախյան բանակցային գործընթացին 1994-1998 թթ., Արցախի ինքնորոշման իրավունքին և մի շարք այլ հարցերի:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ

Սեպտեմբերի 27-ից եռօրյա պաշտոնական այցով Մանկավարժական համալսարան էր այցելել Ուրալի դաշնային համալսարանի պատվիրակությունը: Համագործակցության հուշագրի ստորագրման շրջանակներում Ուրալի դաշնային համալսարանի Հումանիտար ինստիտուտի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչները Պատմության և հասարակագիտության ֆակուլտետում հանդես եկան դասախոսություններով:

Սեպտեմբերի 29-ին «Ռուսաստանի արդյունաբերական ժառանգությունը Ուրալում» թեմայով դասախոսությամբ հանդես եկավ Ուրալի համալսարանի Ռուսաստանի պատմության ամբիոնի պրոֆեսոր Վլադիմիր Վասիլևիչ Զապարիյը, իսկ հոկտեմբերի 1-ին՝ նույն համալսարանի պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ, Ուրալի համալսարանի Նոր և նորագույն պատմության ամբիոնի դասախոս Յուլիյա Վլադիմիրովնա Զապարիյի դասախոսությունը «Մեծ եռյակը և մեծ հույսերը. ՄԱԿ-ի ստեղծման պատմությունը» թեմայով էր:

ՀՊՄՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Աշոտ Խոեցյանն ընդունեց հյուրերին: Երկխոսություն ծավալվեց երկու համալսարանների միջև համագործակցային կապերի ստեղծման և ընդլայնման շուրջ: Ռեկտորն ընդգծեց, որ պատիվ է համագործակցել նման ներուժ ունեցող դասական համալսարանի հետ, որն ունի շուրջ 4 հազար դասավանդող և 35 հազար ուսանող, 12 ինստիտուտ, 164 գիտական լաբորատորիա, 12 դեպարտամենտ, նաև վստահեցրեց, որ ՀՊՄՀ Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի դեկանի նախաձեռնությամբ ստեղծված կապերը կզարգացնեն, կքննարկեն բոլոր հաջորդական քայլերը՝ գտնելու կրթական ոլորտի նոր համագործակցային եզրեր և ընդհանուր հետաքրքրություններ:

«Մենք շատ ենք գնահատում մեր բուհի միջազգային կապերը, մեր ուսանողները կրթական ծրագրերով սովորում են աշխարհի տարբեր համալսարաններում, և հուսով եմ՝ շուտով նաև Ուրալի համալսարանում»,-ամփոփեց Աշոտ Խոեցյանը:

Հուշագրի ստորագրումը ենթադրում է դասախոսների և ուսանողների փոխանակում, կրթական համատեղ ծրագրերի իրականացում:

Պրոֆեսոր Վլադիմիր Զապարիյը նկատեց՝ իրենց հայագիտական կենտրոնում կարող են համատեղ պաշտպանություններ կազմակերպել, առաջիկայում կարելի է գտնել համագործակցության այլ հնարավորություններ ևս:

Ուսանելի դասախոսություն

Ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ անց է կացվում դասախոսական հանդիպումներ ուսանողների հետ: Սեմինար-քննարկման առաջին դասախոսությունը վարեց Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի դեկան, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Էդգար Հովհաննիսյանը: Թեման մերօրյա էր, արդիական՝ «Ազգայնականություն, ազգայնամոլություն և պահպանողականություն»:

Դասախոսը ոչ ֆորմալ հանդիպման ձևաչափում ուսանողներին ներկայացրեց ազգային գաղափարախոսության, ազգայնականության և ազգայնամոլության առանձնահատկությունները՝ ուսանողների իմացության ու հետաքրքրությունների համատեքստում ակտիվ երկխոսություն ծավալելով քննարկվող հարցերի շուրջ:

«Տեղեկատվական այս հոսքերի դարում մարդը երբեմն չի կողմնորոշվում՝ ինչպես զարգացնել ներքին բանիմաց դիմադրողականությունը: Ապաքաղաքական հողի վրա իսկապես, կա ասելիք և կա ազգային դաշտը ձևավորելու խնդիր,- ասում է Էդգար Հովհաննիսյանը:- Մենք ունենք ինքնամաքրվելու խնդիր և պետք է հետամուտ լինենք դրան՝ հետ նայելով մեր պատմության ու գրականության խորքը, որպեսզի կարողանանք գտնել շատ հարցերի պատասխաններ:

Ցավոք այս սերունդը չունի ազգային տեսլական»:

Ուսանողների «ի՞նչ անել» հարցի պատասխանն էլ պարզ էր. պատմաբանն ուսանողներին խորհուրդ տվեց շատ կարդալ, համալսարանական կրթությունից զատ ինքնակրթվել, զարգանալ, որովհետև այսօր ավելի քան պետք է «ազգային հետնախորքի վրա դաստիարակվող սերունդ»:

Ժամանակը լուրջ մարտահրավերներ է առաջ բերում, որոնք պետք է հաղթահարել, և դա պետք է սկսել գաղափարախոսական վակուումի դեմ պայքարից: Մենք պետք է կրթենք ու դաստիարակենք ազգային ոգով, բարձր պատասխանատվությամբ, սեփական երկրի ու հայրենիքի շահը ամեն ինչից վեր դասող երիտասարդություն, որպեսզի կարողանանք լուծել մեր երկրի առջև ծառացած խնդիրները, որ կարողանանք ստեղծել կայուն ներկա և անվտանգ ապագա՝ վստահեցնում է Էդգար Հովհաննիսյանը:

Ինտելեկտուալ խաղ-մրցույթ՝ «Մտագրոհ-2»

Սեպտեմբերի 23-ը Լսողության խանգարումներ ունեցող անձանց միջազգային օրն է: Մանկավարժական համալսարանի Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի ղեկավարությունը ուսանողական խորհրդի հետ սեպտեմբերի 28-ին նախաձեռնել էր ինտելեկտուալ խաղ-մրցույթ՝ «Մտագրոհ-2»՝ նվիրված այդ օրվան:

«Նախաձեռնության նպատակը լսողության խանգարում ունեցող անձանց իրավունքների մասին իրազեկելն է, նոր գիտելիքներ հաղորդելը»,-ասաց ֆակուլտետի ուսանողական խորհրդի նախագահ Մադլեն Մինասյանը:

Խաղին մասնակցելու համար հրավիրել էին համալսարանի բոլոր ֆակուլտետների և ՀՊՄՀ վարժարանի 5-ական ուսանողի և սովորողի, ինչպես նաև Երևանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիրի ուսուցիչների և աշակերտների:

Միջոցառման մուտքն անչափ հուզիչ էր. հատուկ կրթահամալիրի սաները ժեստերի լեզվով երգ ներկայացրին:

Խաղը վարող ուսանողներն անցկացրին վիճակահանություն՝ ընտրելու թիմերի կազմը:

«Մտագրոհ-2» խաղին հետևող ժյուրիի կազմում ֆակուլտետի դեկան, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Սիրանուշ Կարապետյանն էր, Հատուկ հոգեբանության և մանկավարժության ամբիոնի վարիչ Թերեզա Ազատյանը, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Սվետլանա Մուրադյանը, համալսարանի ուսանողական խորհրդի նախագահ Պարույր Գալստյանը: Ժյուրիի կազմում ընդգրկվել էին նաև 2019 թ. գեղեցկության մրցույթի հաղթող Լիանա Ոսկերչյանը, ով զբաղվում է հատուկ կարիք ունեցող երեխաների հարցերով, և նորաձևության մարկետինգի մասնագետ Աննա Սալոմեն: Միջոցառմանը մասնակցում էին դասախոսներ և ուսանողներ, ինչպես նաև էրազմուս պլյուս ծրագրով Հայաստանում գտնվող հյուրեր Չեխիայից:

Մրցույթն ընթացավ լարված մթնոլորտում, և արդյունքներն ամփոփելուց հետո պարզ դարձավ, որ հաղթող է ճանաչվել «Վարդագույն» թիմը:

Միլվա ԱՍՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՈՉ ՄԻԱՅՆ ԴԱՍԱԳՐՔԵՐՈՒՄ Է, ԱՅԼԵՎ՝ ՆԱՄԱԿԱՆԻՇՆԵՐՈՒՄ

Սեպտեմբերի 17-ին Մանկավարժական համալսարանի թանգարանում բացվեց «Հայաստանի Հանրապետության անկախության 30-ամյակը» խորագիրը կրող ցուցահանդեսը: Ցուցահանդեսի շրջանակներում ներկայացվել էր բուհի Կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոս, քիմիական գիտությունների թեկնածու, դոցենտ Աշոտ Բաբախանյանի նամականիշների անձնական հավաքածուն՝ նվիրված այս տարիների ընթացքում մեր երկրի տարբեր ասպարեզների նվաճումներին ու կորուստներին:

Ցուցադրությանը ներկայացվել էին նամականիշներ՝ թողարկված Հայաստանի անկախության տարիներին նշանակալից դեպքերի առթիվ, Հայաստանի և բարեկամ երկրների հետ համատեղ թողարկված նամականիշներ, Արցախի Հանրապետությանը նվիրված նամականիշներ և բացիկներ:

«Պատմությունը, պատմական ժառանգությունը սերունդների համար հետագա ճանապարհն անցնելու կարևորագույն բաղկացուցիչներից է: Բոլոր ազգերի մեծագույն երազանքն անկախությունն է, իսկ այս ցուցադրությանն ամբողջականացված է դրան հասնելու ուղիները: Միայն անկախությունն է, որ մեր պետականության ծաղկման երաշխիքն է տալիս, այն աչքի լույսի պես պիտի պահենք,-ասաց ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Աշոտ Խոտեցյանը:-Անկախության հռչակագիրն ու դրան նախորդած իրադարձությունները մեր բազմադարյան պատմության կարևորագույն ձեռքբերումներից է»:

Ռեկտորի պաշտոնակատարը խոսեց մերօրյա մար-

տահրավերներին դիմակայելու մասին, որովհետև այսօր էլ գտնվում ենք գոյաբանական խնդիրների առաջ, վստահեցրեց, որ «մեր ժողովուրդն իր իմաստության շնորհիվ պարտավոր է պահպանել դժվարությամբ ձեռքբերածը»:

«Անկախության ձեռքբերումը դժվար է, առավել դժվար է այն պահպանելը: Անկախության սերունդն այս առումով մեկ անելիք ունի՝ փայփայել ու պահպանել մեր ձեռքբերումները, հզորացնել ու շենացնել երկիրը,-ասաց Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի դեկան Էդգար Հովհաննիսյանը:- Այսօրվա ինքնատիպ ու եզակի ցուցադրությունը գիտական տեսանկյունից ամբողջացնում է Հայաստանի անկախության ձեռքբերումները»:

«Դուք եկել եք շարունակելու այն սերունդներին, ում նկարները տեսնում եք համալսարանի թանգարանում: Աշոտ Բաբախանյանի անձնական հավաքածուն մեր հանրապետության լավագույն հավաքածուներից է, որով նա զբաղվել է դեռևս երիտասարդ տարիներին,-ուսանողներին դիմեց ՀՊՄՀ գիտական գրադարանի տնօրեն Տիգրան Պետրոսյանը:-Անհրաժեշտ է իմանալ, որ մեր երկրի պատմությունը ոչ միայն դասագրքերում է, այլև նամականիշներում: Այստեղ ցուցադրված նամականիշներում ամբողջությամբ ներկայացված է մեր անկախության անցած ճանապարհը: Վերջին նամականիշում Շուշիի Սուրբ Ղազանչեցոց եկեղեցին է, այն թողարկվեց օրեր առաջ»:

Անկախության տոնի առթիվ ներկաներին շնորհավորեց ցուցադրված հավաքածուի հեղինակ Աշոտ Բաբախանյանը: Նա կարևորեց հատկապես այլ երկրների հետ համատեղ թողարկված նամականիշները:

Թանգարանի տնօրենը խոսեց թանգարանում բացված ցուցահանդեսի և այլ ցուցադրությունների մասին, օրվա համատեքստում կարևորեց համալսարանի և թանգարանի գործունեությունը, նաև շնորհավորեց բոլորին և մասնավորապես հավաքածուի հեղինակ Աշոտ Բաբախանյանին:

«Սա մի ժամանակաշրջանի մասին է, որ ապրել ենք, և լավ առիթ՝ վերհիշելու, ինչու ոչ՝ արժևորելու և դասեր քաղելու անցյալից՝ ապագայի համար»,- հավելեց թանգարանի տնօրեն Ալվարդ Գրիգորյանը:

«Ուսուցիչը պետք է ունենա ճարտարապետական մտածողություն»,-

վստահեցնում է կրթության փորձագետ Սերոբ Խաչատրյանը

Կրթության փորձագետ Սերոբ Խաչատրյանը սեպտեմբերի 24-ին Մանկավարժական համալսարանում հանդես եկավ «Սովորել և սովորեցնել» խորագրով դասախոսությամբ: Բանախոսը փորձեց առանձնացնել մանկավարժական ոլորտի ամենակարևոր հարցերը (2007-2019 թթ.), որոնք այսօր լուրջ մարտահրավերներ են դարձել, նկարապատկերների միջոցով ներկայացրեց ոլորտի փոփոխությունները և նրանց ազդեցությունը:

Ցավոք, այսօր համացանցը, հեռախոսը, համակարգիչը երեխաների կյանքում շատ մեծ տեղ են զբաղեցնում, և ժամանակակից մարդիկ մի տեսակ դարձել են «էկրանազգիներ»:

Բանախոսը ներկայացրեց՝ ինչպես են մանիպուլացնում ժամանակակից մարդուն. այստեղ մեծ դեր է խաղում նաև փողի մոլուցքը:

Հետազոտությունները ցույց են տվել, որ դասի ընթացքում սովորողը շատ է շեղվում, իսկ նորից կենտրոնանալու համար ժամանակ է պետք: Ահա ինչու որևէ կերպ այս շեղումը թույլատրելի չէ: Կրթության մեծագույն խնդիրներից մեկն այն է, որ մեծերը կորցնում են երեխաներին, որովհետև երեխաները գտել են այլ «մեծեր»: Թեև երեխաները համացանցից նաև սովորում են, սակայն նրանք գտել են ավելի գրավիչ աշխարհ, քան ֆորմալ կրթությունը:

Հետազոտությունները ցույց են տվել, որ միայն մեկ գործողություն կատարող մարդու հիշողության արդյունքն ավելի բարձր է, քան միաժամանակ տարբեր գործողություններ անող մարդունը: Ասել է թե մանկավարժը պետք է հետևի, որ սովորելու ընթացքում սովորողը զբաղվի միայն մեկ բանով՝ սովորելով:

Սերոբ Խաչատրյանը փաստեց, որ ժամանակակից ուսուցիչը միայն իր առարկայից գիտելիքներ փոխանցող չպետք է լինի, այլ պետք է ներկայանա որպես ճարտարապետ: Ուսուցիչը պետք է հասկանա՝ երբ, որտեղ և ինչ մեթոդներ կիրառի, իսկ դրա համար նա պետք է ունենա ճարտարապետական մտածողություն:

«Անկախ ամեն ինչից, մեզ պետք է ունենալ սովորող»,- ասաց փորձագետը՝ ուսուցչի աշխատանքը համեմատելով ոսկերչի աշխատանքի հետ:

Մանկավարժության կանոններից մեկն էլ այն է, թե երբ պետք է ուսուցիչը բաց թողնի երեխային. խոսքը ուսուցչի պատասխանատվության՝ երեխային աստիճանական փոխանցման մասին է:

Ուսուցիչը միշտ պետք է հիշի՝ «այն, ինչ կա իր գլխում, չկա սովորողի գլխում: Կրթության մեջ իմացողը միշտ սովորեցնում է չիմացողին»: Ահա ինչու պետք է բաց թողնել, որ երեխաներն իրար հետ աշխատեն, իրար հետ ավելի լավ սովորեն:

Կրթություն (educ) բառը նշանակում է «դուրս բերել», մինչդեռ ուսուցիչները փորձում են գիտելիքն անընդհատ ներս գցել:

Այսօր համացանցային աշխարհը երեխաներին զվարճացնում է այնպիսի հիմարություններով, որ մենք կորցնում ենք մարդկային միտքը, որը փոխարինվում է «թերթող մտքով»: Այս առումով արժե հիշել Թոմաս Էլիոթի խոսքերը. «Գիտելիքի մեջ կորցրինք իմաստությունը, տեղեկույթի մեջ կորցրինք գիտելիքը, տվյալների մեջ կորցրինք տեղեկույթը»:

Գունապատկերների օրինակով դահլիճում ներկա գտնվող մանկավարժներին ու ապագա մանկավարժներին փորձագետը հորդորեց՝ օգնել, որ երեխան տեսնի պարզ ու բարդ կապերը և վերջին փուլում կարողանա գիտելիքներից շենք կառուցել: ԵՎ պետք է երեք բառ հաճախակի գործածել՝ «դեռևս», «միասին», «իսկ հիմա ինքդ փորձիր»:

Այսինքն՝ բարձր սպասելիքներ սահմանել երեխաների համար, օգնել նրանց՝ վստահել իրենց ուժերին, երեխային ներշնչել, որ նա կարող է…«Եթե մենք երեխային ոգեշնչենք, ավել լավ կրթություն կունենանք»,-վստահեցրեց բանախոսը և հավելեց. «Միշտ դրեք ավելի բարձր նշաձող երեխայի համար»:

Հանդիպումն ավարտվեց հարց ու պատասխանով, որի ընթացքում խոսք գնաց համագործակցային ուսուցման, արագ և դանդաղ կրթության վնասների ու արդյունքների, համալսարանական կրթության նեղ մասնագիտացման վնասների, 12-ամյա կրթության ու ծանրաբեռնված դասագրքերի և այլ հարցերի մասին:

Ցավոք, աշխարհը փորձում են հարմարեցնել կյանքի արագ ռիթմին, իսկ կրթությունը հևալով ձգտում է հասնել հետևից, համաքայլ ընթանալ՝ կորցնելով տարիների ընթացքում թրծված ու բյուրեղացած շատ ձեռքբերումներ ու ավանդույթներ:

Միլվա ԱՍՐՅԱՆ

Թրեյնինգ՝ նվիրված բիզնես մտածելակերպին

«Մանթաշով» գործարարների միության հիմնադիր նախագահ, «Չոր մարքեթինգի» հիմնադիր, գործարար Վահրամ Միրաքյանը Մանկավարժական համալսարանում անցկացրեց «Բիզնես մտածելակերպը բոլորի համար» խորագրով թրեյնինգ:

Թրեյնինգի ընթացքում քննարկվեցին բիզնես մտածելակերպին առնչվող «ի՞նչ իմանալ բիզնես սկսելուց առաջ», «ինչպե՞ս դառնալ հաջողակ գործարար», «ինչպե՞ս կրթությունը կապել բիզնեսի հետ» և այլ հարցեր: Ուսանողների և Վահրամ Միրաքյանի միջև ծավալվեց հարց ու պատասխան. Վերջինս պատասխանեց ուսանողներին հետաքրքրող հարցերին:

Գործարարն ուսանողներին խորհուրդ տվեց և հորդորեց՝ անդադար զարգանալ և փնտրել նոր կապեր՝ անընդհատ մեծացնելով առնչությունների շրջանակը:

Ուսանողներն իրենց գոհունակությունը հայտնեցին գործարար Վահրամ Միրաքյանին՝ թրեյնինգի նախաձեռնման և հետաքրքիր խորհուրդների համար:

Մեր անվանի շրջանավարտները. Աշոտ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՀԱՅՐԵՆԻՔԻՑ ՀԵՌՈՒ՝ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՀԱՄԱՐ

- Հարգարժան Աշոտ Առաքելյան, Դուք Մանկավարժական համալսարանի 1971 թվականի շրջանավարտ եք, երկար տարիներ նաև աշխատել եք Մանկավարժական համալսարանի Հայոց պատմության ամբիոնում և ամբիոնի պատվավոր անդամ եք: Տարիների հեռվից ի՞նչ հիշողություններ եք պահել հոգու խորքում հարազատ համալսարանի մասին: Ովքե՞ր են Ձեզ դասավանդել կամ հետք թողել Ձեր կրթության ճանապարհին:

- Հոգուս խորքում մնացել են ջերմ հիշողություններ, հուշ և կարոտ: Ամեն տարի համալսարան այցելելով, երբեմն թվում է, թե ուր որ է հանդիպելու եմ իմ սիրելի դասախոսներին, որոնց մեծագույն հարգանքով եմ հիշում: իսկ ամենից շատ իմ հիշողության մեջ վառ է մնացել մեր ամբիոնի վարիչ Սուրեն Հակոբյանի կերպարը:

- Ծնունդով արցախցի Աշոտ Առաքելյանը երկար տարիներ ապրում է Չեխիայում: Ի՞նչն է հայրենիքից հեռու ապրեցնում Ձեզ:

- Անկեղծ ասած, ինքս էլ չեմ հարգում և չեմ էլ մեղադրում նրանց, ովքեր տնտեսական և քաղաքական պայմաններին չհարմարվելով, հեռանում են հայրենիքից: Իմ տեղափոխվելու պատճառը չեխուհի կինս էր...Նա եկավ Հայաստան մշտական բնակության, սակայն երբ Հայաստանում վիճակը վատացավ, ստիպված էինք տեղափոխվել Չեխիա, այլապես իմ ընտանիքում բաժանում էր սպասվում: Չզարմանաք, եթե ասեմ՝ հայրենիքից դուրս ամենաշատն ինձ ապրեցնում է կնոջս գեղեցիկ ու մեղմ բնավորությունը, ջերմությունն ու սերը:

- Պատմեք Չեխիայում Ձեր գործունեության ու հաջողությունների մասին:

- Սկզբնական շրջանում ինձ հրավիրեցին Օլոմոուց քաղաքի համալսարան՝ դասավանդելու Ռուսաստանի պատմություն: Լեզվին լավ չտիրապետելու պատճառով հրաժարվել եմ և սկսել զբաղվել նկարչությամբ, որն իմ երկրորդ մասնագիտությունն է:

Չեխիայի նկարիչների և Չեխիայի պրոֆեսիոնալ նկարիչների միության, ինչպես նաև Մորավիա-Սլովակիա նկարիչների կազմակերպության անդամ եմ: Պարգևատրվել եմ տասնյակ պատվոգրերով, ընդհուպ Չեխիայի առաջին պրեզիդենտ Տոմաշ Մասարիկի դիպլոմով՝ Չեխիայի խորհրդարանում ունեցած իմ ցուցահանդեսի համար:

- Վաղուց Եվրոպան դարձել է շատ հայերի համար բնակության վայր: Որպես նրանցից մեկը՝ կարո՞ղ եք ներկայացնել՝ որքանո՞վ են հայերն ինտեգրվում եվրոպական այս կամ այն երկրին, ինչպե՞ս են համատեղում սեփական և այլոց մշակույթները, թե՞ ձուլվում են...Նկատի ունեմ կրթություն, մշակույթ, լեզու...

- Ի տարբերություն մուսուլմանների՝ հայերը և մյուս քրիստոնյա ժողովուրդները, եթե ոչ ամբողջապես, ապա մեծամասամբ ինտեգրվում են Եվրոպայում՝ միաժամանակ պահպանելով ազգայինը: Մեզ մոտ երեխաները հիմնականում հաճախում են չեխական դպրոցներ, սակայն նաև շաբաթը 2-3 անգամ երեկոյան մասնակցում են լեզվի և պատմության դասընթացների:

Չեխիայի հայկական դեսպանությանը ջանքերով կազմակերպվում են «Հայկական օրեր», Հայաստանին նվիրված միջոցառումներ, ուր հնչում են հայկական երգն ու պարը: Այս տարի նման միջոցառումներ են կազմակերպվել Չեխիայի 7-8 քաղաքներում, Հայաստանին ու Արցախին նվիրված հայրենաշունչ միջոցառումներ չեխ հասարակության համար:

Ամեն տարի Ապրիլի 24-ը նշանավորվում է մեծ երթով, հայրենիքից հրավիրված արվեստի տարբեր ներկայացուցիչների մասնակցությամբ:

Հայապահպանությանն ուղղված մեծ աշխատանք են տանում հոգևոր առաջնորդ Բարսեղ Փիլավչյանը և «Օրեր» ամսագրի խմբագիր Հակոբ Ասատրյանը: Ինքս էլ պարբերաբար հատուկ ցուցահանդեսներ եմ կազմակերպում հայ նկարիչների հետ համատեղ:

- Պատմաբան լինելուց զատ նաև հիանալի գեղանկարիչ եք, ուրույն ոճ ունեցող ստեղծագործող: Հայաստանում կազմակերպված Ձեր ցուցահանդեսների մշտական այցելուն եմ եղել: Բազմաթիվ ցուցահանդեսներ եք ունեցել նաև Արցախում: Չեխիայում որքանո՞վ են գնահատում Ձեր արվեստը, և, որքան տեղյակ եմ, Ձեր աշխատանքները պահանջված են: Ձեր ցուցահանդեսների մասին գրում են Չեխիայի թերթերն ու ամսագրերը, հայկական «Օրեր» պարբերականը: Փոխվե՞լ է Ձեր թեման: Կպատմե՞ք ինչ եք նկարում և ինչ զգացողություններ եք փոխանցում նկարների միջոցով:

- Անկեղծ ասած՝ ինքս էլ չէի սպասում, որ արվեստի մեջ կարող եմ այդպես հաջողել: Յուրաքանչյուր տարի 2 անհատական ցուցահանդես եմ ունենում, մասնակցում 2-3 համատեղ ցուցահանդեսների: Անհամեստություն չի լինի, եթե հավելեմ, թե ինչ են ասել իմ արվեստի և իմ մասին. «Ծաղիկների արքա» (Մարտին Նեվիել, Danik թերթի գլխավոր խմբագիր), «Նկարիչ Աստծու կողմից: Բռավո, վարպետ» (Յան Սլովաչեկ, դոկտոր, պրոֆեսոր, արվեստագետ), «Գեղանկարչական ոճերի և կողմերի արդի խառնաշփոթության մեջ Աշոտ Առաքելյանի նկարները պատկանում են ֆիգուրատիվ անհատականություն արտահայտող արվեստի ստեղծագործական բնագավառին, որի մեջ խորհրդանշականը և գեղագիտականը դառնում են հասկանալի ու համոզիչ» (Յոզեֆ Մաթիաս Մինարիկ, Չեխիայի ակադեմիական նկարիչ):

Իմ թեմատիկան՝ մոդեռն ռեալիզմն է: Սակայն կարևորն այն չէ, թե ինչ ես նկարում, կարևորն այն է՝ ինչպես ես նկարում:

- Տեղյակ եմ, որ Դուք նաև Չեխիայի պառլամենտի արտահաստիքային թղթակից եք, ինչ-որ չափով հայերի դեսպան, ով կարող է նաև հարցեր բարձրացնել:

- Չեխիայի խորհրդարանի մամուլի արտահաստիքային քաղաքական մեկնաբան եմ, Danik թերթի: Հիմնական թեման ներկա միջազգային հարցերի վերլուծությունն է, անդրադառնում եմ նաև Հայաստանին:

Չեխիայի խորհրդարանում ունեցած ցուցահանդեսի ժամանակ չեխ սենատորներից մեկը հարցրեց. «Դուք հայ եք և Եվրոպայի շահերն եք պաշտպանում: Ի՞նչն է պատճառը»: Պատասխանեցի, որ կինս ազգությամբ չեխուհի է, բնակվում եմ Չեխիայում, և այն իմ երկրորդ հայրենիքն է: Նաև՝ թշնամուս թշնամին իմ բարեկամն է: Եթե հանկարծ իսլամը նվաճի Եվրոպան՝ Թուրքիան հաջորդ օրը Հայաստան կմտնի:

Չեխ պատմաբաններից մեկն էլ իմ մասին գրել է. «Հայ պատմաբանն իր մեջ ունի ավելի մեծ զգացմունք և իմաստություն, քան ամբողջ Եվրոպայի հակաէմիգրացիոն քաղաքական գործիչները միասին վերցրած»:

Հանդես եմ գալիս նաև Հայաստանի քաղաքական հարցերի շուրջ՝ Եվրոպայի երբեմնի ոչ ճիշտ դիրքորոշման տեսանկյունից:

Չեխիայի երեք այլ կուսակցությունների հետ առնչվում եմ՝ միջազգային հարցերի շուրջ հանդես գալով քննադատությամբ: Տարբեր ժողովներում երբեմն ամբիոններից խոսում են արդարության մասին, սակայն սեղանների շուրջ մոռանում են արդարության մասին և առաջնորդվում սեփական շահերով:

Նժդեհն ասել է՝ հաղթում է ուժեղը, ոչ թե արդարը: Կցանկանայի, որ Հայաստանն ուժեղ լիներ, որովհետև մուսուլմանը մեկ բարոյականություն ունի՝ ուժը: Երբ այն չեն տեսնում, նվաճում են:

- Աշխարհը շատ է փոխվել, բազմաթիվ հարցերի շուրջ մեծ գերտերությունները չեն կարողանում ընդհանուր հայտարարի գալ: Վիճակագրություն ունեք, թե ինչպես են եվրոպական երկրներում, այդ թվում և Չեխիայում մոտ ապագայում մեծ ազդեցություն ունենալու մուսուլմանները:

- 1950-60-ականներին Եվրոպայում բնակվում էր 5-7 միլիոն մուսուլման, այժմ՝ 70-80 միլիոն: Այն ժամանակ 120 քաղաքացուց մեկն էր իսլամ, այժմ՝ 8 կամ 9 քաղաքացուց մեկը:

Եվրոպան ծննդաբերության ցածր տոկոսի պատճառով ծերանում է: Այժմ Չեխիայի բնակչության միջին տարիքը 42-43 տոկոս է, Գերմանիայինը՝ 47, 5 տոկոս: Եվրոպան աշխատուժի կարիք ունի և ընդունում է օտարների, փոխանակ բարձրացնի ծննդաբերության աճը:

1950-60-ականներին 65-ն անց անձինք Չեխիայում կազմում էին բնակչության 15-17 տոկոսը, այժմ՝ 22-23: Նույն պատկերն է նաև ողջ Եվրոպայում:

ՄԱԿ-ի և Եվրամիության վիճակագրությամբ 2500-ականներին մահանալու է վերջին եվրոպացին: Սակայն կա և փիլիսոփայության օրենք. ազդումն առաջ է բերում հակազդեցություն: 2050-60 թվականներին Եվրոպան ունենալու է մի նոր, խելացի առաջնորդ, և ողջ Եվրոպան մաքրվելու է իսլամից:

- Անկախ Հայաստանի 30-ամյակի տարում ի՞նչ մտորումներ ունեք և ինչպե՞ս կարող եք հույս ու հավատ ներշնչել պատերազմի արհավիրքների միջով անցած հայ ժողովրդին:

- Կուզեի Գևորգ Էմինի բառերով ասել՝ «մենք դեռ կամբողջանանք, մենք դեռ կմիանանք և կգտնենք մի օր լրիվ դառնալու հնարն անհնար»:

- Որպես ծնունդով արցախցի և որպես հայ մարդ՝ դեռևս պատերազմից առաջ հաճախ եք բարեգործություն արել Արցախում: Այժմ էլ շարունակում եք սատարել արցախցիներին նյութապես ու բարոյապես: Ո՞րն է հայրենասիրության Ձեր կարգախոսը: Թե՞ ամեն ինչ անում եք համեստ ու լուռ, առանց բարձրաձայնելու...

- Ուժերիս ներածին չափով, իսկապես առանց բարձրաձայնելու, փորձում եմ օգտակար լինել: 1989 թվականից մինչ այսօր նյութապես և բարոյապես պարբերաբար աջակցել եմ տասնյակ ընտանիքների: Հայրական գյուղում Արցախի առաջին պատերազմում զոհված հայրենակիցներիս համար իմ միջոցներով կառուցվել է հուշաղբյուր-կոթող: Մորս գյուղի դպրոցի առաջին դասարանցիներին ամեն տարի նյութական օգնություն եմ ցուցաբերում:

- Ձեզ համար ինչի՞ց է սկսվում հայրենիքը: Ի՞նչ կուզեիք ասել մեր թերթի միջոցով հայ երիտասարդներին, ուսանողությանը:

- Մեր երիտասարդներին, ուսանողությանը ցանկանում եմ երջանիկ ապագա: Կուզեի բարձր պահեին հայրենիքի պատիվը:

Հարցազրույցը՝ Սիլվա ԱՍՐՅԱՆԻ

Սյունյաց աշխարհը գեղանկարիչ Լեմս Ներսիսյանի կտավներում

Սեպտեմբերի 20. Անկախության 30 տարիներին ընդառաջ խորհրդանշական ցուցադրություն՝ «Իմ Սյունիք» խորագրով: Սյունիքյան հիասքանչ բնապատկերներ՝ Մեղրի, Ագարակ, Կապան, Գորիս... մինչև Զորաց քարեր... Սյունիքն իր ողջ հմայքով: Գեղանկարիչ Լեմս Ներսիսյանի ուխտագնացությունը պարբերաբար իր մտածելակերպն ու աշխարհայացքն է դրոշմում կտավների վրա, խտացված ասելիքի մատուցմամբ ու արևային գույներով գրավում այցելուներին:

Մանկավարժական գիտությունների

դոկտոր, պրոֆեսոր, ՌԴ կրթության ակադեմիայի ակադեմիկոս, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Լեմս Ներսիսյանի հերթական ցուցահանդեսը «Զանգակ» գրատանն էր կազմակերպվել: Եկել էին նկարչի արվեստի երկրպագուները՝ դասախոսներ, ուսանողներ, հարազատներ: Ելույթներն անկեղծ էին ու բնութագրող, նկարներում Սյունիքի չկոտրվող ոգին էր ու բարձրաբերձ լեռները՝ երկնքի ամպե ծրարներով բարուրված: Եվ գույներ, գույներ...Հայաստանի հարավային դարպասի գեղեցկուհի պահապաններն ասես գեղանկարչի վրձնահարվածների ներքո էլ ավելի էին գեղեցկացել՝ ի ցույց դնելով լեռնաշխարհի ողջ հմայքը: Հայրենիքը բնության ու տիեզերական անսահմանության մեջ, հայրենասիրության վառ, ընդգծված դրսևորումներ, կյանքի ու բնության փիլիսոփայական խոհ ու ընկալում... Ահա այն զգացողությունները, որ արթնացնում են յուրաքանչյուրի մեջ գեղանկարչի ստեղծագործական պոռթկումները:

«Այս օրերին, երբ Սյունիքն անցնում է փորձությունների միջով, ես ուզում եմ մեր հասարակությունն այս ամենը նկատի ու ճանաչի Սյունիքը: Ես քայլել եմ Ագարակից մինչև Սիսիան...Նկարել եմ և որոշել մատուցել այն, ինչ շատերն իրենց աչքերով չեն տեսել: Եվ կարծում եմ՝ ինձ հաջողվել է: Սյունիքյան 86 պատկերանկար, ցավոք այստեղ ընդամենը 50 նկար ցուցադրելու հնարավարություն էր»,-ասաց նկարիչը:

Մի առանձին գորովով գեղանկարիչն առանձնացրեց Ծիրանածորը, Գորիսի բնանկարները, Տեղ գյուղը, որոնք շատ տիպիկ են բնաշխարհի համար:

Ելույթ ունեցան պրոֆեսորներ Մնացական Մանուկյանը, Ալիտա Դոլուխանյանը, Իգոր Կարապետյանը, քաղաքագիտության դոկտոր Լևոն Շիրինյանը, ՀՀ արվեստի գործիչ Կարեն Աղամյանը:

Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ վաստակավոր մանկավարժ Մնացական Մանուկյանն իր ելույթում անդրադարձավ նկարչի գեղագիտական ու մանկավարժական դասերին. «Լեմս Ներսիսյանի նկարներում բնությունը շնչավորվում է՝ ծաղկի բուրմունքն ես առնում, զգում ջրի թարմությունը: Միաժամանակ նա կարողանում այդ ամենը տեղափոխել մանկավարժություն՝ ձևավորելով գեղագիտական զգացողություններ, գեղագիտական ճաշակ, գեղագիտական հարաբերություններ»:

Նա նկարչին մաղթեց առողջ ապրելակերպ և դեպի հավերժություն գնացող նկարներ:

ՀՊՄՀ Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի հասարակագիտության ամբիոնի վարիչ, քաղաքագիտության դոկտոր Լևոն Շիրինյանը և Բանասիրական ֆակուլտետի հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ալիտա Դոլուխանյանը արժևորեցին գեղանկարիչ Լեմս Ներսիսյանի ստեղծագործությունները՝ հատկանշական համարելով այս օրերին Սյունիքին նվիրված նկարաշարի ցուցադրությունը:

«Ես մեծ հաճույքով եմ եկել այս ցուցահանդեսին, որովհետև Լեմս Ներսիսյանի արվեստի երկրպագուներից եմ: Ես եղել եմ աշխարհի շատ երկրների պատկերասրահներում: Իմ կարծիքով Հայաստանն աշխարհի ամենագեղեցիկ երկիրն է, և այդ գեղեցկությունը մեզ հաղորդում է Լեմս Ներսիյանը:

Լեմս Ներսիսյան գեղանկարչին ճանաչում են ոչ միայն Հայաստանում, նա մեծ ճանաչում ունի նաև արտերկրում: Նրա ստեղծագործությունները հաճախ են ցուցադրվում տարբեր երկրներում և զարդարում շատերի բնակարանները: Լեմս Ներսիսյանը մեր օրերի հրաշալի գեղանկարիչներից է, նրա կտավները հիասքանչ են: Նա մեծ նկարիչ է և ունի ձեռագիր: Ունի իր դպրոցը: Ցավոք, երբեմն ժամանակի նկարիչները չեն գնահատում ժամանակակցին:

Սյունիքն այսօր վտանգի մեջ է: Ես արմատներով սյունեցի եմ: Այն, ինչ տեսել եմ իմ այցելությունների ընթացքում, դրանք այստեղ տեսա, վերապրեցի իմ հիշողությունները:

Ես շատ եմ ուզում, որ Հայաստանը հավերժանա ոչ միայն Լեմս Ներսիսյանի կտավներով, այլ հարատևի յուրաքանչյուր հայի մեջ, որպես հինավուրց հողի ներկայությունը շարունակվի այս նոր աշխարհում: Շնորհակալ եմ, որ դուք կաք»:

Ա. Դոլուխանյանի կարծիքով, առանց չափազանցության, Լեմս Ներսիսյանի նկարները կարող են մրցել իմպրեսիոնիստների հայտնի ստեղծագործությունների հետ: Գրառումների տետրում էլ պրոֆեսորը գրեց. «Այս նկարները հավերժորեն մնալու են հայ արվեստի պատմության մեջ»:

«Այսօրվա ցուցադրությունը նվիրված է Սյունիքին: Ես գտնում եմ, որ մենք Սյունիքը պետք է հայտարարենք գերքաղաքական մշակութային ամբողջական միավոր, հատուկ ռազմավարական նշանակության գոտի»,-ասաց Լևոն Շիրինյանը՝ շնորհավորական խոսքում ընդգծելով նկարչի տաղանդի մեծությունն ու նվիրվածությունը հայրենիքին, Սյունիքի գեղեցկությունն ու խրոխտ ոգու գեղանկարչական ցայտուն արտահայտությունները ներկա ցուցադրությունում, նկարչին մաղթելով ստեղծագործական նոր բացահայտումներ:

«Լեմս Ներսիսյանն իր նկարներով գեղագիտական դասեր է տալիս, ձևավորում գեղագիտական ճաշակ: Նրա ստեղծագործություններում անսքող լավատեսություն կա: Նա սիրում է բնությունն ու մարդկանց: Դա ոգեղեն արարում է, անվերջանալի ինքնաթերապիա...»,- նկատեց մանկավարժական գիտությունների դոկտոր Իգոր Կարապետյանը:

«Միշտ գնահատել եմ այն նկարիչներին, որոնք երիտասարդ սերնդին մոտեցնում են արվեստին: Լեմս Ներսիսյանն այդ սակավ նվիրյալներից է»,- ասաց ՀՀ վաստակավոր գործիչ, ՀՊՄՀ Գեղարվեստական կրթության ֆակուլտետի կերպարվեստի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Կարեն Աղամյանը:

«Իմ Սյունիք» խորագրով ցուցահանդեսը շարունակվեց մինչև սեպտեմբերի 28-ը, իսկ առաջիկայում կներկայացվի Գորիսում:

Միլվա ԱՍՐՅԱՆ

ՓՈՐՁԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ

Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի դասախոս Աննա Չարչյանը պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների հետ հանդիպման ընթացքում ներկայացրեց Լեհաստան կատարած այցի և մասնակցած դասընթացների վերաբերյալ մանրամասներ:

Մանկավարժականի դասախոսը խոսեց 2009 թվականին EVS (Եվրոպայի կամավորական ծառայություն) ծրագրով Լեհաստանում կամավորության, այդ թվում՝ կրոնական և ազգային փոքրամասնությունների, թմրանյութերից, ալկոհոլից կախվածության մեջ գտնվող դեռահասների հետ տարվող աշխատանքների, մշակութային հանդիպումների և այցելությունների մասին:

Աննա Չարչյանը, որպես հետազոտող, 2011-2012 L. Kirkland-ի անվան լեհ-ամերիկյան ազատության Fulbright հիմնադրամի կրթաթոշակային ծրագրով եղել է Պոզնանի Կ. Մարչինկովսկու անվան բժշկական համալսարանում, զուգահեռ աշխատել Պոզնանի թիվ 103 խորը մտավոր զարգացման խանգարումներ ունեցող երեխաների դպրոցում, մտավոր խանգարումներ ունեցող երեխաների «BARTEK» մանկապարտեզում, ինչպես նաև պրակտիկա է անցել հոգեբանամանկավարժական գնահատման կենտրոնում. «Լեհաստանը՝ որպես Երկրորդ համաշխարհային պատերազմի կենտրոն, հետպատերազմյան

շրջանում մեծաթիվ զոհեր և տուժածներ ունեցող եվրոպական երկիր բավականին մեծ տեղ է հատկացնում հոգեբանամանկավարժական աջակցություն և միջամտություն ցուցաբերող կառույցների աշխատանքներին, պետական մակարդակով աջակցում է ինչպես մասնագիտական խմբերին, այնպես էլ միջամտության և աջակցության կարիք ունեցող անձանց: Այստեղ լավ հիմքերի վրա է դրված զարգացման տարբեր խանգարումներ ունեցող երեխաների ու մեծահասակների հետ տարվող աշխատանքը, մեթոդաբանությունը, մասնագիտական անձնակազմի պատրաստվածությունը, բնակչության իրազեկումը, սոցիալական ներառումն ու հարմարեցումները»,-ասում է նա:

Հանդիպման ընթացքում բանախոսը խոսեց նաև Լեհաստանում լոգոպեդական մասնագիտական կրթություն ապահովող պետական և ոչ պետական կառույցների, բարձրագույն մասնագիտական, կառավարման բարձրագույն դպրոցների, ինչպես նաև լոգոպեդի որակավորմամբ հետբուհական կրթության մասին:

Աննա Չարչյանն անդրադարձավ նաև լոգոպեդիայի ոլորտում նորագույն հետաքրքրություններին, ուղղություններին, վերապատրաստումներին:

Հանդիպման ընթացքում հարց ու պատասխանի միջոցով ծավալվեց շահագրգիռ քննարկում:

Մարիա ԱՂԵԿՅԱՆ

ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Մանկավարժական համալսարանի Գեղարվեստական կրթության ֆակուլտետի սրահում սեպտեմբերի 23-ին բացվեց Երևանի Զարդարվեստի պետական արհեստագործական ուսումնարանի սաների ստեղծագործությունների ցուցահանդեսը:

Ֆակուլտետի դասախոսները և ուսանողները տարիներ շարունակ համագործակցում են ուսումնարանի մանկավարժների և սովորողների հետ: Այդ համագործակցության շնորհիվ էլ ծնվեց այս ցուցադրությունը համալսարանում ներկայացնելու գաղափարը:

«Նոր ուսումնական տարին բացում ենք արվեստի միջավայրում մի ինքնատիպ ցուցադրությամբ: Այստեղ ներկայացված են դեկորատիվ-կիրառական արվեստի բազմաբնույթ նմուշներ: Մենք՝ որպես մանկավարժներ, փորձում ենք մեր ուսանողներին հայեցի կրթել ու դաստիարակել, ներարկել սեր արվեստի հանդեպ: Հավելեմ, որ մեր շրջանավարտներն այս ուսումնարանի այսօրվա վարպետներն են, իսկ համագործակցությունը գալիս է տարիների խորքից:

Ռեկտորը կարևորեց բուհ-դպրոց, համալսարան-ուսումնարան համագործակցությունը՝ մաղթելով շարունակականություն, իսկ ֆակուլտետի ղեկավարությանը հորդորեց ամուր պահել փոխհամագործակցային կապերը:

Ուսումնարանի տնօրեն Լուսինե Բարսեղյանը ողջունեց բոլորին, կարևորեց արվեստի նման օջախում ուսումնարանի սաների աշխատանքների ցուցադրությունը՝ այն համարելով պատիվ և մեծ պատասխանատվություն իրենց համար:

«Սա մեր ուսանողների աշխատանքների մի մասն է, այն կարելի է համարել ուսուցողական նրանց համար»,-ասաց տնօրենը:

Լուսինե Բարսեղյանն ավարտել է Մանկավարժական համալսարանը: Նրա հետ զրույցը հաճելի էր. ևս մեկ մանկավարժ նվիրյալ:

«Ես կարծում եմ աշխարհի ամենալավ մասնագիտությունը մանկավարժությունն է: Մեզ մոտ արվեստի լուրջ նվիրյալներ են աշխատում, հիանալի մանկավարժներ: Նրանց գերխնդիրն իրենց գիտելիքները երեխաներին փոխանցելն է:

Ցուցադրության մեջ ուզում եմ առանձնացնել մի աշխատանք՝ Գեղարվեստական կրթության ֆակուլտետի առաջին կուրսի ուսանող Արամ Խաչատրյանի աշխատանքը, ով այս ուսումնարանի շրջանավարտն է եղել, և, ցավոք, զոհվեց Արցախի պատերազմում: Խոնարհվում եմ բոլոր նահատակների առջև:

Շնորհակալություն այս գեղեցիկ ցուցադրության համար, հիրավի մենք ունենք պայծառ սերունդ»,-ասաց ֆակուլտետի դեկան, արվեստագիտության դոկտոր Արա Հակոբյանը:

«Այս օրը խորհրդանշվում է որպես գործի մեծարման օր, շատ կարևոր օր մեզ համար,-ասաց ՀՊՄՀ ռեկտոր, աշխարագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Խոեցյանը:-Ողջունում եմ մեր համալսարանի հետ համագործակցող բոլոր հաստատությունների, մասնավորապես Երևանի Զարդարվեստի պետական ուսումնարանի մանկավարժներին և ուսանողներին: Մեր գործառույթը միայն մանկավարժներ պատրաստելը չէ, մենք այն համալսարաններից ենք, որն իր մեջ ներառում է նաև մշակութային հզոր ուղղություններ:

Ի վերջո, մեր բոլորի նպատակը մեկն է՝ պահել-պահպանել մեր մշակութային ժառանգությունը և մի նոր աստիճանի բարձրացնել այն»:

Մենք ունենք փայտի գեղարվեստական փորագրություն, մետաղի վրա փորագրություն, գոբելեն և այլ մասնագիտություններ, որոնց հիմքում նկարչությունն է:

Նման ցուցահանդեսները շատ պատասխանատու են: Ի պատիվ մեր նվիրյալ մանկավարժների՝ այսօրվա ցուցադրությունը հաջողվեց: Այն, ինչ դուք տեսնում եք, սովորողներն արել են դասերի ընթացքում: Պետք է հաշվի առնել, որ հեղինակները 14-18 տարեկան են: Նրանցից շատերը ուսումնարանն ավարտելուց հետո կրթությունը շարունակում են այս ֆակուլտետում:

Այստեղ ես տեսա ուսանողների, որոնք մեր ուսումնարանի շրջանավարտներն են: Ամեն ինչ կտայի, որ մեր Արամը զոհված չլիներ և այսօր կանգնած լիներ նրանց շարքում: Այս ցուցադրությունը ուսումնարանում մենք կնվիրենք նրա հիշատակին: Ոչ մեկի մասին մենք անցյալով չենք խոսում. նրանք մեր կողքին են, մեզ հետ...»:

Մինչ ցուցահանդեսի բացումը ուսումնարանի սովորողները ծաղիկներ դրեցին Արցախում զոհված համալսարանականների հիշատակը հավերժացնող խաչքարհուշաքարին:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ



Գեղանկարիչ Աշոտ Մելքոնյանը ծնվել է 1930 թվականին, Դոնի Ռոստովում: 1935 թվականին ընտանիքը տեղափոխվել է Հայաստան՝ հաստատվելով Լենինականում: Այստեղ նա սովորել է Ս. Մերկուրովի անվան գեղարվեստի դպրոցում և միաժամանակ աշխատել քաղաքի դրամատիկական թատրոնում: Մասնագիտական կրթություն է ստացել՝ավարտելով Երևանի Փ. Թերլեմեզյանի անվան ուսումնարանը, իսկ 1956-ին՝ Երևանի գեղարվեստի ինստիտուտը:

1957-ից ընդունվել է նկարիչների միություն և ակտիվորեն մասնակցել տարբեր ցուցահանդեսների:

Աշոտ Մելքոնյանի արվեստն աչքի է ընկնում իր բազմաժանրությամբ: Բեղուն ստեղծագործական կյանքի ընթացքում ձևավորվել են նկարչի ուրույն ոճն ու արտահայտչամիջոցները: Նրա վրձնած դիմանկարները, կոմպոզիցիաները, նատյուրմորտներն իրենց պարզությամբ հանդերձ ընկալվում են իբրև դասական աշխատանքներ: Աշոտ Մելքոնյանը հայկական բնանկարի տաղանդավոր վարպետներից մեկն է: Նրա ստեղծած քնարական աշխարհն ու բնության տեսարանները ողողված են մեղմ արծաթե լույսով:

Աշոտ Մելքոնյանն, ի թիվս մեր այլ տաղանդավոր նկարիչներ Հակոբ Հակոբյանի, Հենրիկ Սիրավյանի և Ռաֆայել Սարգսյանի, 1969 թվականին մասնակցել է Գևորգյան ճեմարանի գմբեթարդի առաստաղի որմնանկարչական աշխատանքներին (Կոմիտասի ծննդյան 100-ամյակի առթիվ): Այդ ծավալուն որմնանկարն առ այսօր առինքնում է իր պարզությամբ, մաքրությամբ, հողեղեն շնչով, գույների ու գծերի մեղեդայնությամբ:

Նկարիչը զբաղվել է նաև մանկավարժական գործունեությամբ. 1972-80 թթ. դասավանդել է Հայկական պետական մանկավարժական ինստիտուտում: 1997 թվականից մինչև կյանքի ավարտը Ա. Մելքոնյանն ապրել ու ստեղծագործել է Ֆրեզնոյում (ԱՄՆ):

Նրա ստեղծագործությունները տեղ են գտել նաև մասնավոր հավաքածուներում: Նկարիչը մասնակցել է մի շարք խմբակային և անհատական ցուցահանդեսների՝ Եվրոպայի ու ԱՄՆ-ի տարբեր քաղաքներում՝ արժանանալով բազմաթիվ պարգևների ու կոչումների:

ԻՐԱԶԵԿԵԼ ԿԱՐԵՎՈՐԻ ՄԱՍԻՆ

«Ստեղծիր արվեստ պլաստիկի թափոններից» ցուցադրությանը մասնակցում էր նաև ՀՊՄՀ Գեղարվեստական կրթության ֆակուլտետի 5 ուսանող՝ Սեդա Հակոբյանը, Լիլիթ Կարապետյանը, Մարիամ Մելիքբեկյանը, Մարինե Բաղդասարյանը, Սեդա Ղարիբյանը, Լուսինե Սիմոնյանը: Ուսանողները նշեցին, որ մեծ հետաքրքրությամբ են մասնակցել ծրագրին՝ փորձելով նման կերպ բարձրացնել մի շարք էկոխնդիրներ, ցույց տալ մարդ-բնություն փոխհարաբերությունը, որտեղ վտանգավորը հենց ինքը մարդն է: Նրանք այն կարծիքին են, որ մարդկանց իրազեկելու և այդ գաղափարներով վարակելու համար նմանօրինակ ծրագրերն անհրաժեշտություն են:

Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության SDC-ի կողմից ֆինանսավորվող ծրագրի շրջանակներում նրանք նախ հաղթահարել էին նախընտրական փուլը, ապա ներկայացրել թղթապանակներ՝ գաղափարներն իրականացնելու մեթոդներ և ուղիներ:

Գաղափարի շուրջ համախմբվել էին տարբեր բուհերի ուսանողներ և կառույցների ներկայացուցիչներ՝ խնդիրը նույնն էր բոլորի համար՝ թափոններից՝ հիմնականում պլաստիկից, ստեղծել արվեստի նմուշներ և այդպիսով հասարակությանն իրազեկել կարևորի մասին:

Մանկավարժականի 5 ուսանողները ներառվել էին տարբեր խմբերում: Երիտասարդ ստեղծագործողները ցուցադրության էին ներկայացրել կոնցեպտուալ ինստալացիաներ՝ պատրաստված պլաստիկ թափոններից և շրջակա միջավայրի աղտոտման խնդիրները ներկայացնող, հասարակությանը իրազեկող տեսաֆիլմեր:

Ծրագիրը ղեկավարել է մոդելավորող Վահան Խաչատրյանը, որը կարևորեց հատկապես երիտասարդների՝ որպես հաջորդ սերունդներին կրթողների մասնակցությունը: Համագործակցության և ծրագրի հաջող իրականացման համար նա շնորհակալություն հայտնեց Հայաստանում Շվեյցարիայի դեսպանությանը և հույս հայտնեց, որ նման խնդիրների շուրջ ծրագրերը կլինեն շարունակական:

Ցուցադրության բացմանը ներկա էր նաև Շրջակա միջավայրի փոխնախարար Աննա Մազմանյանը: Նա կարևորեց արվեստին և բնապահպանական խնդրին նմանօրինակ անդրադարձը, ինչը հնարավորություն կտա առավել տեսանելի դարձնել, որ պլաստիկից հնարավոր է արվեստի նմուշներ պատրաստել: Փոխնախարարն այն կարծիքին է, որ մեր երկրում առավել քան պետք են այնպիսի ձեռնարկներ, որոնք կբարձրաձայնեն բնապահպանական խնդիրների մասին և կառաջարկեն լուծումներ:

Քրիստինե ՄԵԼՔՈՆՅԱՆ

Գեղարվեստական լուսանկարների ցուցահանդես

Սեպտեմբերի 13-ին «Նարեկացի» արվեստի միությունում տեղի ունեցավ գեղարվեստական լուսանկարչական աշխատանքների ցուցահանդեսի բացումը, որտեղ ներկայացվել էին Մանկավարժական համալսարանի Կուլտուրայի ֆակուլտետի օպերատորության, գեղարվեստական լուսանկարչության և սոցիալ-մշակութային գործունեության ամբիոնի ուսանողների և շրջանավարտների աշխատանքները:

Ցուցահանդեսի բացման առթիվ մասնակիցներին ողջունեց ամբիոնի դասախոս Արմեն Խաչատյանը: Նա կարևորեց նման ցուցահանդեսների կազմակերպումը մասնագիտական հմտությունների ձեռքբերման ճանապարհին:

Մասնակիցներին շնորհակալագրեր հանձնեց Կուլտուրայի ֆակուլտետի օպերատորության, գեղարվեստական լուսանկարչության և սոցիալ-մշակութային գործունեության ամբիոնի վարիչ Ռուբեն Երզինկյանը:

Ցուցահանդեսը ներկայացվել է ՀՊՄՀ Google Site Photo Gallery-ում, QR կոդի միջոցով հնարավոր է եղել այն դիտել օնլայն:



Լույս է տեսել

Լույս է տեսել Գագիկ Սուքիասյանի «Թանգարանագիտության հիմնահարցեր» դասախոսությունների գիրքը:

Ժամանակակից թանգարանագիտության հիմնահարցերին նվիրված դասախոսությունների նման ձևաչափով տպագրությունը եզակի է, որում «բացահայտված են հարակից գիտությունների հետ թանգարանային գործի և թանգարանագիտության փոխզարգացման օրինաչափությունները՝ տեսական, պատմական, մեթոդական ու կազմակերպական հարցերի լուսաբանմամբ»:

Գիրքը նախատեսված է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի «Գրադարանային-տեղեկատվական աղբյուրներ» և «Թանգարանային գործ և հուշարձանների պահպանություն» բաժինների ուսանողների և դասախոսների, ինչպես նաև ոլորտով հետաքրքրվող անձանց համար:

Գրքի ներածականում գրված է. «Տեղեկատվական մշակույթի և սոցիալական հաղորդակցությունների զարգացման համակարգերում առանձնահատուկ նշանակություն ունեն գրադարաններն ու թանգարանները: Թեև թանգարանների ու թանգարանային գործի մասին ուսումնասիրությունները սկսվել են անցյալ դարերում, սակայն թանգարանագիտությունը, որպես ուսումնագիտական առարկա, Հայաստանում լուրջ հիմքերի վրա դրվեց 21-րդ դարի սկզբից՝ Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ Կուլտուրայի ֆակուլտետի «Գրադարանագիտության և մատենագիտության» ամբիոնում՝ 2001 թվականին «Թանգարանային գործ և հուշարձանների պահպանություն» բաժնի ստեղծումով, որի 20-ամյակը լրանում է 2021 թվականին: Իսկ 2020 թ. լրացավ «Գրադարանագիտության և մատենագիտության» ամբիոնի հիմնադրման 50-ամյակը:

ԳԵՂԵՑԻԿԸ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐՈՒՄ

Գեղեցկությունը փոքրիկ ու աննշան մասնիկներում է, պարզապես այն նկատել է պետք... Ասվածն ավելի համոզիչ կթվա ձեզ, երբ ուսումնասիրեք կենսաբանության բաժնի երրորդ կուրսի ուսանողուհի Լիլիթ Սարգսյանի լուսանկարները, ով ոչ միայն նկատում է գեղեցիկն, այլև այն նկատելի դարձնում շատերի համար:

Սկզբում իր հեռախոսով, իսկ հետո արդեն լուսանկարչական խցիկով զինված՝ Լիլիթը ժամեր շարունակ աշխատում էր գեղեցիկ ու որակյալ կադրեր ստանալու համար: Եվ հենց այդ երկար աշխատանքի արդյունքում էլ սեպտեմբերի 23-ին մեր ֆակուլտետում կայացավ «Բնությունն իմ աչքերով» խորագրով լուսանկարների ցուցահանդեսը:

Կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սամվել Պիպոյանը, ով նաև Լիլիթի ցուցահանդեսի գլխավոր աջակիցներից մեկն է, նշեց, որ շատ ուրախ է Լիլիթի համար. «Նա գեղեցիկը տեսնելու մեծ կարողություն ունի և կարողանում է նկատել անգամ աննկատը»: Ապա հավելեց, որ այս աշխատասեր ու կյանքով լեցուն աղջնակի հաջողությունները դեռ առջևում են:

Ֆակուլտետի դեկան Ռուզաննա Սադոյանն իր ելույթում նշեց, որ շատ ուրախ է նմանատիպ միջոցառումների և ֆակուլտետի ուսանողների հաջողությունների համար:

Ցուցահանդեսի բացման առթիվ շնորհավորական խոսք ասաց նաև ՀՊՄՀ Ուսանողական խորհրդի փոխնախագահ Համլետ Պետրոսյանը՝ նշելով, որ Ուսանողական խորհուրդը պատրաստ է հնարավորինս, աջակցել ֆակուլտետային միջոցառումների կազմակերպմանը, ինչպես նաև Լիլիթին:

Ելույթ ունեցան նաև ամբիոնի դասախոսները, Լիլիթի հարազատները և ընկերները, ովքեր ուրախ են ուսանողուհու հաջողությունների համար:

Ցուցահանդեսին ներկա գտնվողները հեռացան՝ հավատով, որ սա Լիլիթի առաջին փոքրիկ քայլն է հաջողության մեծ ճանապարհին...

ՄԵԿ ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ ԱՅՍ ՕՐԸ...

Մեկ տարի առաջ այս օրը՝ սեպտեմբերի 27-ին, սկսվեց քառասունչորսօրյա պատերազմը, որի արդյունքում ունեցանք բազմաթիվ զոհեր: Մի ամբողջ սերունդ քաջաբար կռվեց և պայքարեց հանուն մեր խաղաղ ապագայի: Շատերն այդ պայքարում ընկան և իրենց կյանքը զոհեցին հանուն մեր այսօրվա, հանուն խաղաղ մեր գալիքի: Հանուն հայրենիքի նահատակվածների շարքում էին նաև մեր համալսարանի ուսանողներ ու շրջանավարտներ:

ՀՊՄՀ զոհերին նվիրված հուշաքարի մոտ սեպտեմբերի 27-ին կայացավ նրանց հիշատակին նվիրված միջոցառում: Առավոտյան համալսարանի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Աշոտ Խոեցյանը պրոֆեսորադասախոսական անձնակազմի և ուսանողների հետ ծաղիկներ խոնարհեց համալսարանի անմահ հերոսներին նվիրված հուշաքարին, ապա ուսանողները աղավնիների տեսքով փուչիկներ բաց թողեցին դեպի երկինք՝ ի նշան խաղաղության: Իսկ երեկոյան կատարվեց մոմավառության արարողություն:



Մեր պարտքն է մշտապես հիշել մեր անմահ հերոսներին և խոնարհվել նրանց հիշատակի առջև, քանզի նրանք չխնայեցին իրենց երիտասարդ կյանքը հանուն մեր խաղաղ այսօրվա ու վաղվա օրվա:

Մարիամ ՍԱՐԳՍՅԱՆ
Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի ՈՒԽ փոխնախագահ,
Լրատվական հանձնաժողովի պատասխանատու

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
էլ. փոստ՝ Newspaperaspu.am, asryansilva@gmail.com
Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպագրատանը:
Հասցեն՝ Արշակունյաց 2
Տպաքանակը՝ 1800 օրինակ: Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է:
Հղումը պարտադիր է: Թերթը տարածվում է անվճար:
Հանձնված է տպագրության 07.10.2021 թ.

Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝ www.aspu.am

Գլխավոր խմբագիր՝
Սիլվա ԱՍՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու
էջադրումը՝ Պետրոս ՎԱՐԴԱՆՅԱՆԻ
Համարի պատասխանատու՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ